

ծածինը, որ շինուած էր 543ին Յուստինիանոսի առատաձեռնութիւններով: Գաւթը գրաւեց անդաստակը (atrium) սրահին տեղը, որ նախապէս կը տարածուէր եկեղեցիին ճակատը: Բայց այս սրահը միշտ չէր ջնջուեր: Երբեմն զայն գաւթին առջև բերելով դո՛ր կ'ըլլային, և չորս սիւներով անդաստակին հետ միաժամանակ ան գոյութիւն կ'ունենար:

Այսպէս Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին վերաշինելու ծրագիրը, ինչպէս որ յղացաւ Յուստինիանոս, կրնար ծնունդը ըլլալ, ինչպէս ծիսական կարգի, նոյնպէս արուեստական դիտումներու հետեւանքով: Եկեղեցիներու շինութեան մէջ կղերի մասնակցութիւնը կը վկայէ թէ ծիսական պահանջներու հոգը երբեք մէկ կողմ թողուած չէր: Եթէ Ս. Գերեզմանի աշխատանքներու ձեռնարկը Կոստանդիանոսի կողմէն Բիւզանդացի քահանայի մը՝ Եւստատիոսի յանձնուեցաւ, Պարագոս եպիսկոպոսին հսկողութեան տակ, Յուստինիանոսի ճարտարագետ Թէոտորի պաշտօն տըրուեցաւ Երուսաղէմի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շինութիւնը: Կայսրը երկու եպիսկոպոսներու՝ Ասկարոնցի Անտոնի և Բելլացի Զաքարիայի յանձնարարեց Սամարիացիներէ հրդեհուած եկեղեցիները քննել և անոնց վերաշինութեան ծախքերը ճշդել: Պետական գանձը կամ Սամարացիներուն հարստութիւնները պիտի հոգային այս ծախքերը: Այս վերջիններուն աւերները կը տարածուին, ինչպէս առաջին Պաղեստին, որուն կը վերաբերէր Բեթղեհէմը, նոյնպէս երկրորդ Պաղեստինը որ կը բովանդակէր Սկիւթոպոլիսը և Դեկապոլիսը:

Որո՞նք են Յուստինիանոսի մեծ ծրագիրը և Ս. Ծննդեան եկեղեցւոյ վիճակը երբ սկսուեցան փոփոխութիւնները որ կը պարզուին յիշատակարանին պարզ քննութեամբ մը, որմէ անտարակոյս կը հասկցուի թէ ծիսական զարգացմամբ ստեղծուած պահանջին զոհացում տրուած է: Բազմաթիւ եկեղեցիներու վերաբերութեամբ Բիւզանդիոնի մէջ կատարուածին նման, կայսեր ճարտարագետական փառասիրութիւններու համապատասխան նոր սրբավայր մը ստեղծելու համար Բեթղեհէմի եկեղեցիին ամբողջ շէնքը չէ քանդուած, հակառակ Եւտիքիոսի պատմութեան: Բայց և այնպէս անձիշդ պիտի ըլլայ կարծիք թէ նախնական շէնքը բացարձակ կերպով անվթար մնացած ըլլայ, վասն զի ամէն վերջարդարում ունէ կանխահաճ քանդում կրնայ ունենալ: Յուստինի-